



ԸՆԹԱՑԱԿԱԿԱՐԳ

Մենթալ թվաբանության
միջազգային օլիմպիադայի
անցկացման կարգ



1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Օլիմպիադային կարող են մասնակցել այլ կրթական կենտրոններում, դպրոցներում կամ ինքնուրույն մենթալ թվաբանություն սովորող երեխաները:

1.2. Մասնակիցների տարիքը՝ սկսած 2022 թվականի ծնվածներից :

1.3. Օլիմպիադայի անցկացման վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ադանա Կոմպլեքս:

1.4. Օլիմպիադայի անցկացման ամսաթիվը՝ 2026 թվականի մայիսի 24:

1.5. Գրանցումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով (գրանցման հղումը տրամադրվում է): Ներկայացված տվյալների ճշտության և հավաստիության պատասխանատվությունը կրում է հայտ ներկայացնողը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.6. Հայտ ներկայացնողը կարող է լինել կենտրոնի ղեկավարը, մարզիչը կամ մասնակցի ծնողը:

1.7. Մասնակցության համար կարող եք դիմել 2026 թվականի փետրվարի 26-ից մինչև մայիսի 20-ը ներառյալ:



1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.8. Սաների մասնակցության արժեքը ներառում է՝ նվերներ, գավաթներ, պատվոգրեր, շոու ծրագիր և ճաշի հյուրասիրություն:

Ծնողների մասնակցության արժեքը ներառում է՝ օլիմպիադայի դահլիճում սեղանի շուրջ ամրագրված տեղ, շոու ծրագիր և ճաշի հյուրասիրություն:

1.9. Մասնակցության վճարը ենթակա չէ վերադարձման՝ մասնակցի չներկայանալու կամ մասնակցությունից հրաժարվելու դեպքում:




1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.10. Մասնակիցը համարվում է Օլիմպիադային գրանցված միայն այն ժամանակ, երբ մասնակցության վճարը ամբողջությամբ կատարված է:

1.11. Օլիմպիադայի մասնակիցների թիվը սահմանվում է մինչև 700 մարդ: Կազմակերպիչը իրավունք է վերապահում նոր հայտերի ընդունումը փակել նշված ժամկետներից շուտ՝ մասնակիցների անհրաժեշտ քանակի վաղաժամկետ հավաքագրման դեպքում:

1.12. Ուղեկցող անձինք/ ծնողները պատասխանատվություն են կրում մասնակիցների կյանքի և առողջության համար:





2. ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- 2.1. Օլիմպիադան անցկացվում է անհատական կարգով:
 - 2.2. Մասնակիցները դասակարգվում են ըստ ծննդյան տարեթվի և հաշվելու հմտության մակարդակի:
 - 2.3. Տարիքային խմբերը, մակարդակները, վարժությունների բարդության աստիճանն ու քանակը ներկայացված են հավելված 1-ում:
 - 2.4. Օլիմպիադան անցկացվում է մեկ փուլով: Առաջադրանքները կատարելու համար մասնակիցներին հատկացվում է 10 րոպե: Մասնակիցները ազատ են ընտրելու իրենց հաշվելու մեթոդը՝ աբակով կամ մենթալ:
- * Ուշադրություն է դարձվում թվերի գրության ճշտությանը և ընթեռնելիությանը:

2. ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2.5. Ցուցումներ մասնակիցների համար - հավելված 2:

2.6. Եթե մեկ անվանակարգում ներկայացված է 10-ից պակաս հայտ, ապա Կազմկոմիտեի որոշմամբ կարող է տեղի ունենալ անվանակարգի փոփոխություն: Այս դեպքում Օլիմպիադայի մասնակիցը նախապես տեղեկացվում է փոփոխության մասին:

2.7. Գրանցման արդյունքների հիման վրա Կազմկոմիտեն կարող է կրճատել մասնակցության խմբերի քանակը՝ ի սկզբանե հայտարարված խմբերից ավելի փոքր թվով խմբեր ձևավորելով:

2.8. Յուրաքանչյուր մասնակցին կտրվի եզակի QR կոդ: Բոլոր թեստերը կողավորված են՝ չբացահայտելով թեստը կատարող մասնակցի ինքնությունը:
* Մասնակիցներին խստիվ արգելվում է որևէ լրացուցիչ նշում կատարել իրենց աշխատանքների վրա:

3. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

3.1. Վարկանիշային աղյուսակում գրանցվում է միայն ճիշտ լուծված օրինակների քանակը: Յուրաքանչյուր օրինակին տրվում է գործակից՝ կախված նրա բարդությունից:

3.2. Ճիշտ պատասխանի համար միավորները հաշվվում են հետևյալ ձևով՝ ճիշտ լուծված օրինակների քանակը բազմապատկվում է տվյալ օրինակին սահմանված գործակցով:

3.3. Մասնակցի անձնական վարկանիշը կազմվում է բոլոր ճիշտ լուծված օրինակների միավորների հանրագումարից: Արդյունքները գրանցվում են համակարգում՝ մասնակցի QR կոդով:

3. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

3.4. Յուրաքանչյուր խմբում ստացված արդյունքների հիման վրա հաղթողներն ու մրցանակակիրները որոշվում են հավելված 3-ի համաձայն: Եթե արդյունքները հավասար են, առավել բարձր վարկանիշ ստանում է այն մասնակիցը, ով ավելի շատ միավոր է հավաքել բարդ գործակիցներով օրինակներ լուծելու համար:

3.5. Աշխատանքները ստուգում է հաշվիչ հանձնաժողովը, որի կազմում ընդգրկված են Օլիմպիադայի կամավորները: Մարզիչներն ու կենտրոնների ղեկավարները կարող են մասնակցել որպես անկախ դիտորդներ:

3.6. Աշխատանքների ստուգումից հետո մարզիչները հնարավորություն ունեն տեսնելու իրենց մասնակիցների արդյունքները: Կազմկոմիտեի անդամը ցույց է տալիս աշխատանքները մարզչի խնդրանքով: Սաների աշխատանքները պահպանվում են մեկ շաբաթ, այնուհետև արխիվացվում են:

3. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

3.7. Հաղթողները որոշվում են ստուգման արդյունքում ձևավորված վարկանիշային աղյուսակի հիման վրա: Օլիմպիադայի մասնակիցները և հաղթողները ստանում են պատվոգրեր, գավաթներ, մրցանակներ և նվերներ:

3.8. Սուպերչեմպիոնի տիտղոսի համար մրցում են A, B, C և Prof. կատեգորիաների մասնակիցները: Սուպերչեմպիոնի տիտղոսը շնորհվում է յուրաքանչյուր կատեգորիայից մեկ մասնակցի, ով կհավաքի ամենաշատ միավորները տվյալ կատեգորիայում:

3.9. Կազմկոմիտեն իրավունք է վերապահում մրցույթի ընթացքում սահմանել լրացուցիչ անվանակարգեր և խրախուսման ձևեր Օլիմպիադային մասնակցող մասնակիցների համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Տարիքային խմբեր

- 2021 - 2022 թվականներին ծնվածներ
- 2020 - 2021 թվականներին ծնվածներ
- 2018 - 2019 թվականներին ծնվածներ
- 2015 - 2017 թվականներին ծնվածներ
- 2012 - 2014 թվականներին ծնվածներ
- 2009 - 2011 թվականներին ծնվածներ
- 2015 - 2018 թվականներին ծնվածներ
- 2009 - 2018 թվականներին ծնվածներ
- 2009 - 2016 թվականներին ծնվածներ

Հաշվին տիրապետելու մակարդակներ

- Կատեգորիա KIDS, KIDS A – Փոքրիկներ (Ֆլեշ քարտեր, պարզ հաշիվ ներքևի գնդիկների վրա, պարզ հաշիվ բոլոր գնդիկների վրա)

ՀԱՎԵԼՎԱԾ 1

- Կատեգորիա 1– Պարզ հաշիվ (պարզ հաշիվ, առանց բանաձևի)
- Կատեգորիա 2 – Փոքր ընկեր (փոքր ընկեր, 5-ի բանաձև)
- Կատեգորիա 3 – Մեծ ընկեր (մեծ ընկեր, 10-ի բանաձև)
- Կատեգորիա 4 – Միքս (միքս բանաձև)


- Կատեգորիա A, B – Բազմապատկում / բաժանում (բոլոր բանաձևեր, բացասական թվեր, 8-րդ մակարդակի բաժանում / բազմապատկում)

- Կատեգորիա C - Բազմապատկում / բաժանում (արմատներ, ամբողջով թվեր, 7-րդ և 6-րդ մակարդակների բաժանում / բազմապատկում)

Կատեգորիա Prof - Բազմապատկում / բաժանում (տոկոսներ, ամբողջով թվեր, 5-րդ մակարդակի բաժանում / բազմապատկում)

Առաջադրանքների բարդության կոեֆիցիենտ

- 1 – յուրաքանչյուր ճիշտ լուծված առաջադրանքի համար մասնակիցը ստանում է 1 բալ
- 2 – յուրաքանչյուր ճիշտ լուծված առաջադրանքի համար մասնակիցը ստանում է 2 բալ
- 3 – յուրաքանչյուր ճիշտ լուծված առաջադրանքի համար մասնակիցը ստանում է 3 բալ



Կատեգորիաների և տարիքային խմբերի կոդավորում

- KIDS - Ֆլեշ քարտեր, Պարզ հաշիվ (պարզ թվեր, առանց բանաձևի), 2021-2022 թթ ծնվածներ
- KIDS A - Պարզ հաշիվ (պարզ թվեր, առանց բանաձևի), 2019-2020 թթ ծնվածներ
- K1 – Պարզ հաշիվ (պարզ թվեր, առանց բանաձևի), 2017 – 2018 թթ ծնվածներ
- K2 – Փոքր ընկեր (փոքր ընկեր, 5-ի բանաձև), 2017 – 2018 թթ ծնվածներ
- K3 – Մեծ ընկեր (մեծ ընկեր, 10-ի բանաձև), 2017 – 2018 թթ ծնվածներ
- K4 – Միքսեր (միքս բանաձև), 2017 – 2018 թթ ծնվածներ

Կատեգորիաների և տարիքային խմբերի կողավորում

- J1 – Պարզ հաշիվ (պարզ թվեր, առանց բանաձևի), 2015 – 2017 թթ. ծնվածներ
- J2 – Փոքր ընկեր (փոքր ընկեր, 5-ի բանաձև), 2015 – 2017 թթ. ծնվածներ
- J3 – Մեծ ընկեր (մեծ ընկեր, 10-ի բանաձև), 2015 – 2017 թթ. ծնվածներ
- J4 – Միքսեր (միքս բանաձև), 2015 – 2017 թթ. ծնվածներ
- S1 – Պարզ հաշիվ (պարզ թվեր, առանց բանաձևի), 2012 – 2014 թթ. ծնվածներ
- S2 – Փոքր ընկեր (փոքր ընկեր, 5-ի բանաձև), 2012 – 2014 թթ. ծնվածներ

Կատեգորիաների և տարիքային խմբերի կողավորում

- S3 – Մեծ ընկեր (մեծ ընկեր, 10-ի բանաձև), 2012 – 2014 թթ ծնվածներ
 - S4 – Միքսեր (միքս բանաձև), 2012 – 2014 թթ ծնվածներ
 - T1 – Պարզ հաշիվ (պարզ թվեր, առանց բանաձևի), 2009 - 2011 թթ ծնվածներ
 - T2 – Փոքր ընկեր (փոքր ընկեր, 5-ի բանաձև), 2009 - 2011 թթ ծնվածներ
 - T3 – Մեծ ընկեր (մեծ ընկեր, 10-ի բանաձև), 2009 - 2011 թթ ծնվածներ
 - T4 – Միքսեր (միքս բանաձև), 2009 - 2011 թթ ծնվածներ
- 

Կատեգորիաների և տարիքային խմբերի կոդավորում

- **A – Բազմապատկում / բաժանում (բոլոր բանաձևեր, բացասական թվեր, 8-րդ մակարդակի բաժանում / բազմապատկում), 2015 - 2018 թթ ծնվածներ**
- **B – Բազմապատկում / բաժանում (բոլոր բանաձևեր, բացասական թվեր, 8-րդ մակարդակի բաժանում / բազմապատկում), 2012 - 2014 թթ ծնվածներ**
- **C – Բազմապատկում / բաժանում (արմատներ, ամբողջով թվեր, 7-րդ և 6-րդ մակարդակների բաժանում / բազմապատկում), 2009 - 2018 թթ ծնվածներ**
- **Prof – Բազմապատկում / բաժանում (տոկոսներ, ամբողջով թվեր, 5-րդ մակարդակի բաժանում / բազմապատկում), 2009 - 2016 թթ ծնվածներ**

ՀԱՎԵԼՎԱԾ 2

- Ցուցումներ մասնակիցներին
- Թեստում առաջադրանքները դասավորված են ըստ բարդության մակարդակների: Մասնակիցն ինքն է որոշում, թե որ օրինակից սկսի հաշվել:
- Օրինակի բարդության մակարդակին համապատասխան տրվում է 1-ից մինչև 3 կոեֆիցիենտ: Ըստ կոեֆիցիենտի՝ օրինակների դիմաց նշվում է համապատասխան կոեֆիցիենտի թիվը (տես Սիլաբուսը):
- Նպատակն է բոլոր ճիշտ լուծված օրինակների հանրագումարով հավաքել առավելագույն միավորներ:
- Մասնակիցը կարող է հաշվել ինչպես մենթալ, այնպես էլ արձանով:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

- Ցուցումներ մասնակիցներին
- Առաջադրանքների կատարման համար տրվում է 10 րոպե ժամանակ:
ՄԻՆՉԵՎ ժամանակի մեկնարկը կամ դրա ԱՎԱՐՏԻՑ հետո աշխատանքի կատարումը դիտվում է որպես Օլիմպիադայի կանոնների խախտում:
- Հաշվվում են սահմանված ժամանակում բոլոր ճիշտ լուծված օրինակները:
- Օլիմպիադայի ընթացքում մասնակիցները ՉԵՆ ԿԱՐՈՂ շփվել միմյանց հետ, փոխանակվել իրերով և նյութերով, արտագրել կամ թույլ տալ, որ իրենցից արտագրեն, առանց թույլտվության վեր կենալ:
- Բոլոր թեստերը լինելու են անանուն: Յուրաքանչյուր մասնակցի կտրվի իրեն հատուկ ունիկալ կոդ:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

• Մրցանակային տեղերի բաշխումը

	Կատեգորիա KIDS, KIDS A	Կատեգորիա 1 Պարզ հաշիվ	Կատեգորիա 2 Փոքր ընկեր 5-ի բանաձև	Կատեգորիա 3 Մեծ ընկեր 10-ի բանաձև	Կատեգորիա 4 Միջս	Կատեգորիա A Բազմ. / Բաժ.	Կատեգորիա B Բազմ. / Բաժ.	Կատեգորիա C Բազմ. / Բաժ.	Կատեգորիա Prof Բազմ. / Բաժ.
Սուպերչեմպիոն	-	-	-	-	-	1	1	1	1
Չեմպիոններ	1, 2, 3	1, 2, 3	1, 2, 3	1, 2, 3	1, 2, 3	1, 2, 3	1, 2, 3	1, 2, 3	1, 2, 3
Առաջին կարգի հաղթողներ	Կատեգորիայի մասնակիցների ընդհանուր քանակի 20%	Կատեգորիայի մասնակիցների ընդհանուր քանակի 20%							
Երկրորդ կարգի հաղթողներ	Կատեգորիայի մասնակիցների ընդհանուր քանակի 30%	Կատեգորիայի մասնակիցների ընդհանուր քանակի 30%							
Երրորդ կարգի հաղթողներ	Կատեգորիայի մասնակիցների ընդհանուր քանակի 50%	Կատեգորիայի մասնակիցների ընդհանուր քանակի 50%							